ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/52 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
6	-	-	Սարքը նախատեսված պետք է լինի տերևների մակերեսի, երկարության և լայնության արագ, ճշգրիտ չափման համար՝ ինչպես դաշտային, այնպես էլ լաբորատոր պայմաններում: Կարող է կիրառվել ինչպես բույսից չկտրված տերևների, այնպես էլ հավաքված տերևների համար: Լայնորեն օգտագործվում է գյուղատնտեսության, բույսերի ֆիզիոլոգիայի, անտառագիտության և էկոլոգիայի ոլորտներում: Սարքը ձեռքի շարժական չափիչ է՝ ինտեգրված չափման սենսորով և միկրոպրոցեսորային կառավարմամբ: Տերևը անցկացվում է չափման հատվածով, և սարքը ավտոմատ կերպով հաշվարկում է տերևի լայնությունը, երկարությունը և մակերեսը: Չափման ընթացքում հնարավոր է տվյալների գրանցում և փոխանցում համակարգչին, ինչպես նաև տեղադրության և ժամանակի համապատասխանեցում GPS-ի միջոցով: Չափվող պարամետրեր՝ տերևի մակերես, տերևի միջին մակերես, տերևի երկարություն, տերևի լայնություն, օգտագործողի կողմից սահմանվող լայնություն, օգտագործողի կողմից սահմանվող երկարություն, վերլուծվող մակերես: Չափման

			միավորներ և ճշգրտություն. Մակերեսի չափման միավոր՝ սմ² Մակերեսի չափման լուծաչափ՝ 0.01±10% սմ² Չափման սխալ՝ ≤5 % Չափման միջակայքներ. Լայնության միջակայք՝ 0–155 մմ Երկարության միջակայք՝ 0–2000 մմ Միաժամանակ չափվող առավելագույն տերևի մակերես՝ մինչև 1000±10% × 155±10% մմ Տվյալների պահպանում. Տվյալների հիշողություն՝ մինչև 5000 չափման խումբ (տերևի մակերես, երկարություն, լայնություն)։ Կապ և տվյալների փոխանցում. Համակարգչային միջերես՝ RS232 Անլար կապ՝ 4G տվյալների փոխանցում GPS մոդուլ՝ ինտեգրված բարձր արագության GPS՝ ժամանակի, աշխարհագրական լայնության և երկայնության գրանցմամբ, Տվյալների արտահանում՝ համակարգչի միջոցով հետագա մշակման համար։ Էներգամատակարարում Ներքին մարտկոց՝ լիթիումային, 3200±20% mAh Արտաքին փոխարինվող մարտկոց՝ 1400±20% mAh Լրացուցիչ տարբերակ՝ սնուցում մարտկոցներով (AA տիպ) Արտաքին սնուցում չի պահանջվում, հարմար դաշտային աշխատանքի համար։ Ֆունկցիոնալ առանձնահատկություններ. Չափիչ միավորը և սենսորը ինտեգրված են մեկ սարքում Միկրոհամակարգչային կառավարում Մեծ չափի LCD հեղուկբյուրեղային էկրան Հարմար դաշտային և երկարատև օգտագործման համար։ Առնվազն 1 տարվա երաշխիք։ Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, փաթեթը չվնասված և ապահովված համապատասխան պահպանման պայմաններով մատակարարման ամբողջ ընթացքում։ Մատակարարումը՝ մասնակցի կողմից։ Մատակարարումից առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ЭКСТРА МОТОРС в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/52 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	марка	наименование производителя	технические характеристики
6			